Մենք չէինք ուզում կռուել. յանուն խաղաղութեան ու հաշտութեան, պատրաստ էինք ընդառաջ գնալու ամէն տեսակ զոհողութիւնների, սակայն, մեր նամարդ թշնամին ընթանում է իր ծրագրած ուղիով. նա, ըստ երևոյթին, ստրկացնել է ուզում մեզ, բայց, իրօք, ուզում է ոչնչացնել մեր բազմաչարչար ազգը: Բայց քանի որ պիտի ոչնչանանք, աւելի լաւ չէ՞, որ զէնքը ձեռներիս փորձենք պաշտպանել մեզ: Գուցէ, յաջողւի մեզ կռուով ձեռք բերել ապրելու իրաւունքը:

Իսկ որ մենք կարող ենք պաշտպանուել, այդ ցոյց տուին վերջին կռիւները մեր ճակատում, ուր մեզանից թւով գերազանց թշնամին նահանջի է դիմել մեր հերոսական դրոհի առաջ:

Հարկաւոր է մի ճիգ ևս, և թշնամին վռնտուած կը լինի մեր երկրի սահմաններից, ուր մեր պապերն ու հայրերը երկար տարիներ արիւն-քրտինքով աշխատել են զէթ մի կերպ հայթայթել իրենց օրւայ ապրուստը:

Հայե՛ր, ժամանակ չէ դանդաղելու: Մինչև յիսուն տարեկան ունեցող բոլոր տղամարդիկ պարտաւոր են զէնքի տակ գալու. ես պահանջում եմ ամենքից ներկայանալ իրենց զէնքերով ու փամփուշտներով հայրենիքի պաշտպանութեան համար:

Հայուհինե՛ր, յիշեցէ՛ք հինգերորդ դարու փաւիկասուն տիկնանց, որոնք ոգևորեցին իրենց ամուսիններին դէպի Մեծ Գործը, անմահ Վարդանի կռիւների ժամանակ. հետևեցէ՛ք նրանց օրինակին. եթէ չէք ուզում, որ ձեր պատիւը ոտնակոխ լինի, խրախուսեցէ՛ք այն վախկոտներին, որոնք դանազան պատրւակներով խուսափում են ճակատ գնալուց: Հաւաքեցէ՛ք ռազմամթերք, հաց, հագուստ և ուրիշ մթերքներ...

Ես խորապէս համոզուած եմ, որ իմ այս կոչը անարձագանգ չի մնայ, և երկու-երեք օրւայ ընթացքում կը կազմակերպւի մի այնպիսի քաջարի զօրաբանակ, որին կը յաջողւի վռնտել թշնամուն հայրենի հողի սահմաններից և ապահովել հայ ժողովրդի գոյութիւնը:

Ցանո՛ւն բազմաչարչար ժողովրդի ֆիզիկական գոյութեան,

Ցանո՛ւն ոտնակոխ եղած ճշմարտութեան —

Ոտքի՛ կանգնեցէք: Դէպի՛ սրբազան պատերազմ:

Բոլոր զէնքի ընդունակ տղամարդիկ պարտաւոր են ներկայանալ Երևանում զօր. Բէժանբէգին, իսկ բոլոր հաւաքւած մթերքները պէտք է յանձնել տեղական Ազգ. Խորհուրդներին»:

Իսկապէս որ հինգերորդ դարը յիշեցնող այս կոչը անարձագանգ չմնաց. զօր. Սիլիկեանը ստացաւ իր պահանջածը:

Մայիս 23-ին, թշնամին, խոշոր ուժերով, յարձակման դիմեց և Բաշ-Աբարանի ճակատում: Սկսեցին արիւնահեղ կռիւներ: Դրօին յաջողւեց կանգնեցնել նրա յառաջխաղացումը՝ զգալի կորուստ պատճառելով նրան:

Ստանալով օժանդակ ուժեր, թիւրքերը նորից անցան յարձակման՝ հանդիպելով մերոնց յամառ դիմադրութեան: Կռիւները տևեցին մի քանի օր: Այստեղ էլ մեր զօրքերը երեւան բերին արտակարգ տոկունութիւն ու քաջութիւն: Դրօի հմուտ ղեկավարութեան տակ նրանք յետ շպրտեցին թշնամու բոլոր գրոհները և մայիս 28-ին, մի խիզախ հակագրոհով փախուստի մատնեցին թշնամուն: Այդ ճակատամարտում հերոսական մահով ընկաւ հայ լաւագոյն հայդուկներից մէկը՝ ձիաւոր խմբի հրամանատար Զեմլեակը: